

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿ ԱՐՄԼԱՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՀԱՅԿ ԱՐՄԼԱՆԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԹԻԱ**

Համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ եկեղեցանուէր եւ ազգաշէն Ձեր գործունէութեան բարի արդիւնքին, որին ականատես եղանք Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին:

Յարգարժան պրն Արսլանեան,

Տակաւին բարեյիշատակ Շնորհք Պատրիարքի գահակալութեան տարիներից սկսեալ Դուք բազում ծառայութիւններ էք մատուցել պոլսահայ աւանդապաշտ համայնքին, նախանձախնդիր, որ մեր ժողովրդի զաւակները ապրեն բարօրութեան մէջ, հաւատարիմ ազգային մեր աժէքներին ու նախնեաց ժառանգութեանը: Երկար տարիներ վարչական պաշտօններում նուիրեալ ծառայութեամբ, ինչպէս եւ Ձեր ազնիւ նուիրատուութիւններով գնահատելի նպաստ էք բերել «Գարակէօեան Տան», «Կազդուրման Կայանի», «Թարգմանչաց Վարժարանի», «ՄԻՐԷ» կրթական հիմնարկի եւ ազգային այլ կառոյցների գործունէութեանը, որոնք կոչուած են սնելու հայ կեանքը Պոլսում եւ ծառայելու հայապահպանութեան սրբազան առաքելութեանը:

Հայրդող ազգանուէր ոգու եւ բարեգործութեան շնորհիւ մեծապէս ընդլայնուեց Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի աստուածահաճոյ գործունէութիւնը, որտեղ Տիրոջ կամքով առիթ ունեցանք լինելու Պոլիս կատարած Մեր այցելութեան օրերին: Ուրախութիւն էր Հայրապետիս համար ականատես լինել, որ Ձեր նուիրաբերութեամբ կառուցուած երկու նոր յարկաբաժինները, նախատեսուած նորաձիւնների եւ չափահասների համար, առաւել արդիւնատուր են դարձնում պատմական հաստատութեան ծառայութիւնը կարիքատուր անձերին:

Գովութեան է արժանի նաեւ Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնը, որը եւս Բարձրեալի օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքով: Ձեր սրտաբուխ, ազնիւ նուիրատուութիւնները Պատրիարքարանին եւ եկեղեցիներին մեծապէս նպաստում են պոլսահայոց հոգեւոր կեանքի շէնութեանն ու պայծառութեանը: Գո-

հուրիւն եւ փառք ենք մատուցանում առ Աստուած, որ Տէրը մեր ազգին շնորհում է Ձեզ պէս հաւատաւոր անձինք, ովքեր իրենց առաւելագոյնն ի գործ են դնում՝ հայոց ազգային-եկեղեցական կեանքը բարեգարդելու եւ հայութեան բարօրութեանն իրենց նպաստը բերելու համար:

Բարձր գնահատանքի արժանացնելով որդիական Ձեր սէրն ու նուիրումը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը, սիրով ընդառաջ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Սեդանի առջեւ ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ արժանացնելով Իր առատ ողորմութեանն ու բիւր շնորհներին:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 370